

Գիտական թեմաների մրցույթների ֆինանսավորումն ավելացել է

Մրցույթների արդյունքներն ամփոփված են

Գիտական մրցույթները գիտական հանրության շրջանում մեծ հետաքրքրություն են առաջացնում: Բացառություն չէր նաև այս տարվանը:

2013 թվականի հունվար—փետրվար ամիսներին հայտարարվել է անցկացվել են գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթներ գիտության բոլոր բնագավառներում:

Մրցույթների արդյունքները երեկ հրավիրված ասուլիսի ընթացքում ներկայացրեցին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը եւ մասնագիտական փորձագիտական խորհուրդների նախագահները, պատասխանատուները:

Այսպես, մրցույթների արդյունքում գիտական եւ գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար մինչև 2 տարի տեւողությամբ դրամաշնորհներ են տրամադրվել 2—5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի:

Հայտերն ընդունվել են առցանց եղանակով՝ բացառելով ցանկացած միջամտություն մրցութային գործընթացին: Առաջին անգամ ծրագրերում ներգրավվել են արտասահմանյան փորձագետ—խորհրդատուներ, հայտի ղեկավարին հնարավորություն է տրվել նշել փորձաքննության գործընթացում անցանկալի 3 փորձագետների անուններ:

Այս տարի ավելացել են գիտական թեմաների մրցույթների ֆինանսավորման ծավալները (2013 թվականին՝ 1 մլրդ 810 մլն 304 հազ.՝ 128 գիտական թեմատիկ ծրագիր, 2014—15 թվականներին՝ յուրաքանչյուր տարի 2 մլրդ 310 մլն՝ 159 ծրագիր): Մրցույթներին մասնակցելու համար ներկայացվել էր ընդհանուր առմամբ՝ 472 հայտ, 358 հայտ բնական գիտությունների եւ 114 հայտ՝ հասարակական գիտությունների եւ հայագիտության բնագավառներից: Ֆինանսավորման են երաշխավորվել 136 գիտական թեմաներ, եւս 23 թեմա՝ բողոքարկման փուլի արդյունքում (ընդհանուր՝ 159 թեմա):

Ամենամեծ թվով թեմաները եղել են բնական գիտություններից՝ 82: Ամենաքիչը՝ բժշկական եւ հասարակական գիտություններից՝ 10—ական թեմա: Ֆինանսավորման երաշխավորված թեմաների մեծամասնությունը ներկայացվել է ՀՀ ԳԱԱ ինստիտուտների կողմից՝ 65 թեմա, Երեւանի պետական համալսարանից՝ 38 թեմա, Ճարտարագիտական համալսարանից՝ 13 թեմա, բժշկական համալսարանից՝ 9 թեմա, Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիայից՝ 10 թեմա եւ այլն:

Ս. Հարությունյանի ներկայացրած տվյալներով, 2013 թ. ապրիլին առաջին անգամ Հայաստանում հայտարարվեց բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների աջակցությանն ուղղված ծրագրերի մրցույթ: Ծրագրին մասնակցելու համար ներկայացվել էր 280 հայտ, հաղթող է ճանաչվել 97—ը:

Հաղթող ճանաչված գիտնականները մեկ տարի ստանալու են ամսական 135 000 դրամ (ներառյալ հարկերը): Ծրագիրը լինելու է ամենամյա:

«Բացի այդ, ամփոփվել են 2011—2013 գիտական եւ գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմամբ իրականացված գիտական թեմաների հաշվետվությունները: Ծրագրերի ֆինանսավորմանը հատկացվել է 1.580.283.700 դրամ, որի շրջանակներում իրականացվել է 360—ից ավելի գիտական գործուղում, ձեռք են բերվել մոտ 206 մլն դրամի սարքեր եւ սարքավորումներ, այդ թվում՝ նաև համակարգչային տեխնիկա»,—նշեց ԳՊԿ նախագահը:

«Այս գործընթացներում ինձ գոհացրեց հանձնաժողովի կողմից անաչառության սկզբունքի պահպանումը: Բայց ինձ համար մտահոգիչ է այն, որ բնական գիտությունների ոլորտում հայտերի քանակը պակասել է 42—ով: Սա քիչ չէ: Դա մասամբ կարող է պայմանավորված լինել այս գործընթացի նկատմամբ գիտական հանրության անվստահությամբ»,—Հայ—ռուսական (սլավոնական) համալսարանի մաթեմատիկայի եւ բարձր տեխնոլոգիաների ինստիտուտի տնօրեն Էդուարդ Ղազարյանը ներկայացրեց իր տպավորությունները եւ հորդորեց ԳՊԿ—ին վերլուծություններ անել վերջին դիտարկման վերաբերյալ:

Դրա բացատրությունը, ըստ Ս. Հարությունյանի, հետեւյալն է. 42—ով պակասած թեմաների հեղինակների մի մասը մասնակցել է հայ—ռուսական, հայ—գերմանական եւ այլ մրցույթների ու շահել է: Անիմաստ էր նույն ծրագրերն այս մրցույթին ներկայացնելը. «Նաեւ թեմատիկ ծրագրերի հայտատուների մի մասը համոզվեց, որ գնահատման չափանիշները չեն տարբերվում միջազգայինից: Այդ իսկ պատճառով մի մասի մոտ իրենց իսկ ծրագրերի նկատմամբ անվստահություն առաջացավ, ուստի չեն ներկայացել: Եւ ակնհայտորեն «թույլ» թեմաների թիվը պակասել է: Չեմ կարծում՝ դա անվստահությունից է: Ընդհակառակը, վստահությունն ավելի է մեծացել»: Իսկ 42 թիվն այս դեպքում նա այդքան էլ մեծ չի համարում:

Հայագիտության մասով ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանի վստահեցմամբ, բոլոր ոլորտներն էլ արտացոլված են եղել: Իսկ ներկայացված եւ հաղթած թեմաների 2/3—ը նոր թեմաներն էին: Ասում է, որ թեմաների թիվը, ճիշտ է, պակասել է, բայց ոչ էականորեն: Այստեղ եղել են նաեւ մինչեւ 35 տարեկան երիտասարդ մասնակիցներ:

Թամարա ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բարձրացել է գիտական թեմաների որակը



Գիտապետկոմի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր ամփոփել է Գիտական և գիտատեխնիկական գործունեության 2013 թվականի մրցույթների արդյունքները: Ներկայացված 472 թեմաներից ֆինանսավորման են երաշխավորվել 159-ը, որոնցից 23-ը բողոքարկման փուլի արդյունքում:

Գիտական թեմաների մրցույթների ֆինանսավորման ծավալներն այս տարի ավելացել են: 2013 թվականի հունվար-փետրվար ամիսներին գիտության բոլոր բնագավառներում պայմանագրային ֆինանսավորման նպատակով անցկացված մրցույթների արդյունքում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար 2-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի տրամադրվեցին դրամաշնորհներ մինչև 2 տարի տևողությամբ: Գիտապետկոմի նախագահ Սամվել Հարությունյանն այսօր ներկայացնելով մրցույթի արդյունքները՝ նշեց, որ ամենամեծ թվով հայտերը եղել են բնագիտության բնագավառում:

Նշենք, որ ֆինանսավորված 159 թեմաներից 23-ը ընտրվել են բողոքարկման արդյունքում: Ինչպես իր հերթին նշեց բնական գիտությունների հանձնաժողովի նախագահ Էդուարդ Ղազարյանը, առաջին անգամ էր մասնակցում գնահատման աշխատանքներին և արդեն կարողացել է տեսնել և դրական, և բացասական երևույթներ: Նրան, նախևառաջ, գոհացրել է մրցույթում անաչառության և արդարության սկզբունքը: Փոխարենը՝ Էդուարդ Ղազարյանին մտահոգում է մասնակիցների թիվը, որը նախորդ տարիների համեմատ պակասել է:

Էդուարդ Ղազարյանին շատ է մտահոգում նաև փորձագետների գնահատականը, որն, ըստ նրա, շատ հաճախ սուբյեկտիվ է:

Սամվել Հարությունյանն անդրադառնալով բնական գիտությունների հանձնաժողովի նախագահի դիտարկումներին՝ բնական համարեց աշխատանքների գնահատման սուբյեկտիվության գործոնը: Նա կարծում է, որ անհնար է ապահովել առավելագույն օբյեկտիվություն, քանի դեռ գիտական փորձագիտության մեջ առկա է մարդկային գործոնը:

Ինչ վերաբերում է հայտերի թվի նվազմանը, ի տարբերություն Էդուարդ Ղազարյանի, Սամվել Հարությունյանին չի մտահոգում, քանի որ նա այդ միտումը պայմանավորում է համեմատաբար թույլ թեմաների նվազմամբ: Հայտերի թվի նվազելը Գիտության պետական կոմիտեի նախագահը պայմանավորում է դրանց առավել որակյալ լինելով:

Սոնա Հակոբյան

Հայաստանում գիտական թեմաների մրցույթների ֆինանսավորման ծավալներն ավելացել են



Հայաստանում գիտության բոլոր բնագավառներում հայտարարվող գիտական թեմաների մրցույթների ֆինանսավորման ծավալներն ավելացել են: Մասնավորապես, 2013-ին 128 գիտական թեմատիկ ծրագրի համար հատկացվել է 1 մլրդ 810 մլն 304 հազար դրամ, 2014-2015 թթ. նախատեսվում է հատկացնել 2 մլրդ 310 միլիոն դրամ՝ 159 ծրագրի համար: Այս մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը: «2013 թվականի հունվար-փետրվարին գիտության բոլոր բնագավառներում գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով հայտարարվեցին և անցկացվեցին գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթներ: Մրցույթին մասնակցելու համար ներկայացվել էր 472 հայտ, որոնցից ֆինանսավորման է երաշխավորվել 159 թեմա», - «Արմենպրես»-ի հաղորդմամբ, ասաց Սամվել Հարությունյանը: Թեմաների ճնշող մեծամասնությունը բնական գիտությունների ոլորտից է (82), ճարտարագիտության և տեխնոլոգիայի ոլորտից՝ 21 հայտ, հայագիտության և հումանիտար գիտությունների ոլորտից՝ 25, բժշկական գիտություններից 10, գյուղատնտեսական գիտություններից՝ 11, հասարակական գիտությունների ոլորտից 10 հայտ:

Մրցույթների արդյունքում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար մինչև երկու տարի տևողությամբ դրամաշնորհներ են տրամադրվել 2-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի:

Հայտերն ընդունվել են առցանց եղանակով՝ բացառելով ցանկացած միջամտություն մրցութային գործընթացին: Առաջին անգամ ծրագրերում ներգրավվել են արտասահմանյան փորձագետ-խորհրդատուներ, հայտի ղեկավարին հանրավորություն է ընձեռվել նշել փորձաքննության գործընթացում անցանակալի է երեք փորձագետների անուններ:

Սամվել Հարությունյանի խոսքով, ֆինանսավորման երաշխավորված թեմաների մեծամասնությունը ներկայացվել է ՀՀ ԳԱԱ ինստիտուտների կողմից՝ 65 թեմա, Երևանի պետական համալսարանից՝ 38, Ճարտարագիտական համալսարանից՝ 13, բժշկական համալսարանից՝ 9, Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիայից՝ 10 հայտ:

Բնական գիտությունների բնագավառի մասնագիտական փորձագիտական խորհրդի նախագահ Էդուարդ Ղազարյանը նշեց, որ մրցույթների ընթացքում փորձ է կատարվում պահել արդարության և անաչառության սկզբունքը: Սակայն նա հայտնեց իր մտահոգությունը՝ կապված անցյալ մրցույթի համեմատությամբ հայտերի քանակի նվազման հետ: «Անցյալ մրցույթի հետ համեմատած այս անգամ բնական գիտությունների բնագավառում հայտերը պակասել են 42-ով, որը մեծ ցուցանիշ է», - ասաց Էդուարդ Ղազարյանը, ինչին ի պատասխան Սամվել Հարությունյանը հայտերի պակասը պայմանավորեց երկու հանգամանքով. «Մենք տեղյակ ենք, որ որոշ գիտական խմբեր մասնակցել են հայ-բելառուսական, հայ-ուկրաինական գիտական թեմաների մրցույթների և հաղթել են, այդ պատճառով չեն մասնակցել այս մրցույթին: Բացի դրանից, ոմանք էլ տեսնելով, որ մեր մրցույթներում գնահատման չափանիշները չեն տարբերվում արտասահմանյան գիտական մրցույթներում ընդունված

ձևերից, որոշել են չներկայացնել թերի ծրագրեր: Նախորդ տարվա համեմատ պակասել են թույլ աշխատանքները»,- նշեց գիտության պետական կոմիտեի նախագահը:

Մամվել Հարությունյանը ներկայացրեց նաև 2013 թ. ապրիլին առաջին անգամ Հայաստանում հայտարարված բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների աջակցությանն ուղղված ծրագրերի մասին: «Ծրագրին մասնակցելու համար ներկայացվել է 280 հայտ, հաղթող է ճանաչվել 97-ը: Հաղթող ճանաչված գիտնականները մեկ տարի ստանալու են ամսական 135 հազար դրամ: Ծրագիրը լինելու է մեկամյա»,- ասաց նա:

Ամփոփվել են 2011-2013 գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորմամբ իրականացված գիտական թեմաների հաշվետվությունները: Ծրագրերի ֆինանսավորմանը հատկացվել է 1 միլիարդ 580 միլիոն 283 հազար 700 դրամ, որի շրջանակներում իրականացվել է 360-ից ավելի գործուղում, ձեռք են բերվել մոտ 206 մլն դրամի սարքեր և սարքավորումներ, այդ թվում՝ համակարգչային տեխնիկա, 1470 հրապարակում է եղել ինչպես տեղական, այնպես էլ արտասահման հանրահայտ գիտական ամսագրերում:

Գիտական թեմաների ֆինանսավորումն ավելացել է



«Այս տարի ավելացել են գիտական թեմաների մրցույթների ֆինանսավորման ծավալները:

Հայտերն ընդունվել են առցանց եղանակով՝ բացառելով ցանկացած միջամտություն մրցութային գործընթացին»: Այս մասին այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը՝ հավելելով, որ առաջին անգամ ծրագրում ներգրավվել են արտասահմանյան փորձագետ –խորհրդատուներ, իսկ հայտի ղեկավարին հնարավորություն է տրվել նշել փորձաքննության ընթացքում անցանկալի 3 փորձագետների անունները:

Սամվել Հարությունյանը հայտարարեց, որ մրցույթներին մասնակցելու համար ներկայացվել էր ընդհանուր առմամբ 472 հայտ՝ 358 բնական գիտություններ և 114 հասարակական գիտություններ և հայագիտություն բնագավառներից, ֆինանսավորման են երաշխավորվել 136 գիտական թեմաներ, ևս 23 թեմա՝ բողոքարկման փուլի արդյունքում (ընդհանուր՝ 159 թեմա):

Նա նշեց, որ ամենից շատ ֆինանսավորվել է բնական գիտությունների ներկայացված աշխատանքերը՝ 82 թեմա, այնուհետև ճարտարագիտություն և տեխնոլոգիա՝ 21 թեմա, բժշկական գիտություններ՝ 10 թեմա, գյուղատնտեսական գիտություններ՝ 11 թեմա, հասարակական գիտություններ՝ 10 թեմա, հայագիտություն և հումանիտար գիտություններ՝ 25 թեմա:

Նշենք, որ մրցույթների արդյունքում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար մինչև 2 տարի տևողությամբ դրամաշնորհներ են տրամադրվել 2-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի:

Բնական գիտությունների մասնագիտական փորձագիտական խորհուրդների նախագահ Էդուարդ Ղազարյանը նշեց, որ մրցութում բավարարել է անաչառությունը և արդարության սկզբունքը, մտահոգել՝ հայտերի քիչ լինելը:

«Բավարարված եմ, որ այս աշխատանքում և գիտության պետական կոմիտեի տնօրինության և հանձնաժողովի կողմից պահպանվել է արդարության, անաչառության սկզբունքը: Բնական է, որ կային դժգոհություններ թեմաների կողմից: Մտահոգիչ էր առաջինը, որ այս մրցութի մասնակիցների թիվը զգալի պակասել էր. 2010 թ-ի բնական գիտությունների հայտերից 42-ով պակաս էր, ինչից կոմիտեն պետք է վերլուծություններ անի, թե ինչով է պայմանավորված, գուցե այս գործընթացի նկատմամբ անվստահությունն է», - ասաց նա:

Էդուարդ Ղազարյանին մտահոգել էր նաև փորձագետների գնահատականը, որն, ըստ նրա, շատ հաճախ սուբյեկտիվ է եղել:

Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն, անդրադառնալով այս դիտարկումներին, բնական համարեց աշխատանքների գնահատման սուբյեկտիվության գործոնը: Նա կարծում է, որ անհնար է ապահովել առավելագույն օբյեկտիվություն, քանի դեռ գիտական փորձագիտության մեջ առկա է մարդկային գործոնը:

Ինչ վերաբերում է հայտերի թվի նվազմանը, ի տարբերություն Էդուարդ Ղազարյանի, Սամվել Հարությունյանին չի մտահոգում, քանի որ նա այդ միտումը պայմանավորում է համեմատաբար թույլ թեմաների նվազմամբ: Հայտերի թվի նվազելը Գիտության պետական կոմիտեի նախագահը պայմանավորում է դրանց առավել որակյալ լինելով:

Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության 2013 թ. մրցույթների արդյունքները



13:03, 17 սեպտեմբերի, 2013:

2013 թվականի հունվար-փետրվար ամիսներին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեն հայտարարել էր գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթ՝ գիտության բոլոր բնագավառներում: Մրցույթների արդյունքում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար մինչև 2 տարի տևողությամբ դրամաշնորհներ են տրամադրվել 2-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի:

Հայտերն ընդունվել են առցանց եղանակով՝ բացառելով ցանկացած միջամտություն մրցութային գործընթացին: Այս տարի ավելացել են գիտական թեմաների մրցույթների ֆինանսավորման ծավալները (2013 թվականին՝ 1 մլրդ 810 մլն 304 հազ.՝ 128 գիտական թեմատիկ ծրագիր, 2014-15 թվականներին՝ յուրաքանչյուր տարի 2 մլրդ 310 մլն՝ 159 ծրագիր): Առաջին անգամ ծրագրերում ներգրավվել են արտասահմանյան փորձագետ-խորհրդատուներ, հայտի ղեկավարին հնարավորություն է տրվել նշել փորձաքննության գործընթացում անցանկալի 3 փորձագետների անուններ:

Մրցույթներին մասնակցելու համար ներկայացվել էր ընդհանուր առմամբ՝ 472 հայտ, 358՝ բնական գիտություններ եւ 114՝ հասարակական գիտություններ եւ հայագիտություն բնագավառներից: Ֆինանսավորման են երաշխավորվել 136 գիտական թեմաներ, եւս 23 թեմա՝ բողոքարկման փուլի արդյունքում (ընդհանուր՝ 159 թեմա):

Այս մասին հայտնում են Գիտության պետական կոմիտեի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժնից:

472-ից ֆինանսավորվել է 159 գիտական թեմա. գիտական գործունեության 2013 թ. մրցույթների արդյունքները



Գիտական և գիտատեխնիկական գործունեության 2013թ. մրցույթների արդյունքներն այսօր հրավիրված ասուլիսին ամփոփեցին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը և մասնագիտական փորձագիտական խորհուրդների նախագահները.

Սամվել Հարությունյանը հայտարարեց, որ մրցույթներին մասնակցելու համար ներկայացվել էր ընդհանուր առմամբ՝ 472 հայտ, 358՝ բնական գիտություններ և 114՝ հասարակական գիտություններ և հայագիտություն բնագավառներից, ֆինանսավորման են երաշխավորվել 136 գիտական թեմաներ, ևս 23 թեմա՝ բողոքարկման փուլի արդյունքում (ընդհանուր՝ 159 թեմա):

Նա նշեց, որ ամենից շատ ֆինանսավորվել է բնական գիտությունների ներկայացված աշխատանքերը՝ 82 թեմա, այնուհետև ճարտարագիտություն և տեխնոլոգիա՝ 21 թեմա, բժշկական գիտություններ՝ 10 թեմա, գյուղատնտեսական գիտություններ՝ 11 թեմա, հասարակական գիտություններ՝ 10 թեմա, հայագիտություն և հումանիտար գիտություններ՝ 25 թեմա:

Նշենք, որ մրցույթների արդյունքում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար մինչև 2 տարի տևողությամբ դրամաշնորհներ են տրամադրվել 2-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի: Հայտերն ընդունվել են առցանց եղանակով՝ բացառելով ցանկացած միջամտություն մրցութային գործընթացին:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահը նշեց, որ առաջին անգամ ծրագրերում ներգրավվել են արտասահմանյան փորձագետ-խորհրդատուներ, հայտի ղեկավարին հնարավորություն է տրվել նշել փորձաքննության գործընթացում անցանկալի 3 փորձագետների անուններ:

Սամվել Հարությունյանը նկատեց, որ այս տարի ավելացել են գիտական թեմաների մրցույթների ֆինանսավորման ծավալները (2013 թ-ին՝ 1 մլրդ 810 մլն 304 հազ.՝ 128 գիտական թեմատիկ ծրագիր, 2014-15 թվականներին՝ յուրաքանչյուր տարի 2 մլրդ 310 մլն՝ 159 ծրագիր):

Ըստ բանախոսի՝ ֆինանսավորման երաշխավորված թեմաների մեծամասնությունը ներկայացվել է ՀՀ ԳԱԱ ինստիտուտների կողմից՝ 65 թեմա, այնուհետև ԵՊՀ-ից՝ 38 թեմա, ճարտարագիտական համալսարանից՝ 13 թեմա, Բժշկական համալսարանից՝ 9 թեմա, Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիայից՝ 10 թեմա և այլն:

Բնական գիտությունների մասնագիտական փորձագիտական խորհուրդների նախագահ Էդուարդ Ղազարյանը նշեց, թե ինչն է իրեն մրցույթում բավարարել, ինչը՝ ոչ.

«Բավարարված եմ, որ այս աշխատանքում և գիտության պետական կոմիտեի տնօրինության և հանձնաժողովի կողմից պահպանվել է արդարության, անաչառության սկզբունքը: Բնական է, որ կային դժգոհություններ թեմաների կողմից: Մտահոգիչ էր առաջինը, որ այս մրցույթի մասնակիցների թիվը զգալի պակասել էր. 2010 թ-ի բնական գիտությունների հայտերից 42-ով պակաս էր, ինչից կոմիտեն պետք է վերլուծություններ անի, թե ինչով է պայմանավորված, գուցե այս գործընթացի նկատմամբ անվստահությունն է»,- ասաց նա:

Էդուարդ Ղազարյանը նաև նշեց, որ բնական գիտությունների ոլորտում հայ գիտնականների ձեռքբերումները շատ մեծ են, մինչդեռ ըստ նրա՝ 230 հայտից ֆինանսավորվել է ընդամենը 82-ը:

«Նշանակում է , որ արդյունավետ ֆինանսավորումը չի ապահովված ... Այստեղ կա օբյեկտիվ-սուբյեկտիվություն, նրանց մոտեցումները տարբեր դրույթների հետ տարբեր են, և չենք կարողանում դրանց տարբերությունը նվազագույնի բերել»,- ասաց նա:

Կոմիտեի նախագահը նշեց, թե պակասել են հայտերը, քանի որ 42 թեմաներից մի մասը մասնակցել են հայ-ռուսական ծրագրի ֆինանսավորմանը, բացի այդ ըստ նրա, ակնհայտ է, որ թույլ թեմաները պակասել են:

Ամենից շատ ֆինանսավորվել են բնական գիտությունների բնագավառի ներկայացված աշխատանքները

Գիտական թեմատիկ ծրագրավորման մրցույթն այսօր ամփոփեցին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը և մասնագիտական փորձագիտական խորհուրդների նախագահները:

Սամվել Հարությունյանի փաստամաբ մրցույթներին մասնակցելու համար ընդհանուր առմամբ ներկայացվել է 472 հայտ, որից 358-ը՝ բնական, 114-ը՝ հասարակական գիտություններ և հայագիտություն բնագավառներից:

Ֆինանսավորման են երաշխավորվել 136 գիտական թեմաներ, ևս 23 թեմա՝ բողոքարկման փուլի արդյունքում է:

«Ամենից շատ ֆինանսավորվել են բնական գիտությունների բնագավառի ներկայացված աշխատանքները՝ 82 թեմա, ապա ճարտարագիտություն և տեխնոլոգիա՝ 21 թեմա, բժշկական գիտություններ՝ 10 թեմա, գյուղատնտեսական գիտություններ՝ 11 թեմա, հասարակական գիտություններ՝ 10 թեմա, հայագիտություն և հումանիտար գիտություններ՝ 25 թեմա», -նշեց ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահը՝ հավելելով, որ այս տարի ավելացել են գիտական թեմաների մրցույթների ֆինանսավորման ծավալները:

Գիտական և գիտատեխնիկական գործունեության 2013թ. մրցույթների ամփոփում



Գիտական և գիտատեխնիկական գործունեության 2013թ. մրցույթներին մասնակցելու 472 հայտ է գրանցվել՝ բնական գիտություններ և 114՝ հասարակական գիտություններ և հայագիտություն բնագավառներից, ֆինանսավորման են երաշխավորվել 136 գիտական թեմաներ, ևս 23 թեմա՝ բողոքարկման փուլի արդյունքում (ընդհանուր՝ 159 թեմա):

Այդ մասին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեցին ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը և մասնագիտական փորձագիտական խորհուրդների նախագահները:

Մրցույթների արդյունքում գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների իրականացման համար մինչև 2 տարի տևողությամբ դրամաշնորհներ են տրամադրվել 2-5 անձից բաղկացած գիտահետազոտական խմբերի:

Ամենից շատ ֆինանսավորվել են բնական գիտությունների ներկայացված աշխատանքերը՝ 82 թեմա, ամենից քիչ՝ հայագիտություն և հումանիտար գիտություններ՝ 25 թեմա:

97 գիտաշխատող մեկ տարի շարունակ ամսական կատանա 135 հազար դրամ. ԿԳՆ



«Գիտական և գիտատեխնիկական գործունեության 2013 թվականի մրցույթներին» ներկայացվել է 472 հայտ, որոնցից ֆինանսավորվել է 150-ը: Այսօր կայացած մամուլի ասուլիսի ժամանակ այս մասին ասաց ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը:

«Ներկայացված հայտերից 358-ը բնական գիտություններից էին, 114-ը՝ հասարակական գիտություններից և հայագիտության բնագավառից: Ֆինանսավորման երաշխավորված թեմաների մեծ մասը ներկայացվել է ԳԱԱ ինստիտուտների կողմից՝ 65 թեմա, ԵՊՀ-ից՝ 38 թեմա, Ճարտարագիտական համալսարանից՝ 13 թեմա, Բժշկական համալսարանից՝ 9 թեմա և այլն», - ասաց նա:

Սամվել Հարությունյանի տեղեկացմամբ՝ այս տարվա ապրիլին առաջին անգամ Հայաստանում հայտարարվել է բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների աջակցությանն ուղղված ծրագրերի մրցույթ:

«Ծրագրին մասնակցելու համար ներկայացվել էր 280 հայտ, հաղթող է ճանաչվել 97-ը: Հաղթող գիտնականները մեկ տարի ստանալու են ամսական կտրվածքով 135 հազար դրամ: Ծրագիրը կլինի ամենամյա: Բացի այդ, ամփոփվել են 2011-2013թթ. գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային ֆինանսավորմամբ իրականացված գիտական թեմաների հաշվետվությունները:

Ծրագրի ֆինանսավորմանը հատկացվել է ավելի քան մեկուկես միլիոն դրամ, որի շրջանակներում իրականացվել է 360-ից ավելի գիտական գործուղում, ձեռք են բերվել 206 մլն դրամի սարքեր ու սարքավորումներ, այդ թվում՝ համակարգչային տեխնիկա, ինչպես նաև 1470 հրապարակում», - ամփոփեց ԿԳՆ պաշտոնյան:

Հանուն Հայաստանի գիտության՝ պետք է աշխատանքները շարունակել ու կատարելագործել



Արդեն ամփոփված են ու հայտնի գիտական և գիտատեխնիկական գործունեության 2013թ. մրցույթների արդյունքները: Բնական գիտություններում ներառված են եղել մաթեմատիկան, ինֆորմատիկան և համակարգչային գիտությունները, քիմիան, կենսաբանությունը, ֆիզիկան, երկրագիտությունը՝ ներառյալ նաև էկոլոգիական ուղղվածության աշխատանքները: Նկատի ունենալով ներկայացված աշխատանքների գնահատումը, բնական գիտությունների մրցութային հանձնաժողովի նախագահ, Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանն ասաց.

«Շատ ծանր, պատասխանատու, երբեմն ինչ-որ առումով նաև չգնահատվող աշխատանք է սա»:

Էդուարդ Ղազարյանը ներկայացնելով, թե ինքն ինչով է բավարարված այդ երկարատև աշխատանքի արդյունքում և ինչով բավարարված չէ, շարունակեց.

«Բավարարված եմ, և դա ամենակարևորն է, որ այս աշխատանքում և գիտության պետական կոմիտեի տնօրինության, և հանձնաժողովի կողմից հնարավորինս պահպանվել է արդարության սկզբունքը, ազնվության սկզբունքը, անաչառության սկզբունքը: Բնական է, որ այդ սկզբունքների պահպանումը շատ կարևոր էր գիտական հանրության առջև հանդես գալու և ներկայանալու: Մա, թերևս, պայմանավորված էր, առաջին հերթին, և այս գործի մեջ ներգրավված մարդկանց պրոֆեսիոնալիզմով, և տնօրինության աշխատակիցների, հանձնաժողովի անդամների մարդկային որակներով: Այնուամենայնիվ, բնական է, որ կային դժգոհություններ, բողոքներ առանձին թեմաների ղեկավարների կողմից»:

Այդ կապակցությամբ նշված աշխատանքի հետագա կատարելագործման, բարելավման առումով իր որոշ նկատառումները հայտնելով, ակադեմիկոսը շարունակեց.

«Առաջինն ինձ համար մտահոգիչ էր, որ այս մրցույթի մասնակիցների թիվը զգալիորեն պակասել էր նախորդի համեմատ, հայտերի քանակը բնական գիտությունների ոլորտում 42-ով պակասել էր 2010 թվականի մրցույթի հայտերի քանակի համեմատ, 42-ը քիչ չէ, և գիտության պետական կոմիտեն երևի պետք է իր վերլուծությունները և եզրահանգումներն անի՝ ինչով էր պայմանավորված պակասը: Ինձ մտահոգում է, որ դա մասամբ կարող է պայմանավորված լինել այս գործընթացի նկատմամբ գիտական հանրության անվստահությամբ, որը խիստ ցանկալի չէ»:

Ըստ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի, բացատրությունը շատ պարզ է՝ 42-ով պակասած այդ թեմաների ղեկավարների մի մասը մասնակցել են հայ-ռուսական, հայ-գերմանական և այլ մրցույթների ու շահել են, այնպես որ, անիմաստ է եղել նույն ծրագրերով այս մրցույթին էլ մասնակցել:

Էդ. Ղազարյանի հավաստմամբ, հիշյալ ոլորտում հայ գիտնականների ձեռքբերումները շատ մեծ են, հատկապես ֆիզիկոսների, քիմիկոսների, կենսաբանների, մաթեմատիկոսների: Այդ իսկ պատճառով ներկայացված 230 հայտից ֆինանսավորվել է ընդամենը 82-ը, ինչը նշանակում է, որ նույնպես արդյունավետ աշխատող մի շարք գիտական խմբերի ֆինանսավորումը չի ապահովված սահմանափակ տեղերի պատճառով:

«Իհարկե,- շարունակեց հիշյալ հանձնաժողովի նախագահը,- այս տարի մենք ձեռքբերում ունենք, նախորդ մրցույթի համեմատ 30-ով ավելացել էր ֆինանսավորվող թեմաների քանակը: Եթե հաջորդ մրցույթին ևս 30-40-ով ավելանա, կարծում եմ, որ ոչ մի ակտիվ աշխատող գիտական խումբ դուրս չի մնա ֆինանսավորման շրջանակներից»:

Ակադեմիկոսի հաջորդ մտահոգությունը պայմանավորված էր մեր փորձագետներով:

«Գիտեք, որ մենք ստացված բոլոր հայտերն ուղարկում ենք փորձաքննության,- ասաց Էդ. Ղազարյանը:- Փորձագետների բանկ գոյություն ունի գիտության պետական կոմիտեում` և տեղական` Հայաստանում աշխատող գիտնականների կազմ, և արտասահմանյան: Յուրաքանչյուր թեմա պարտադիր ներկայացվում է գրախոսման, փորձաքննության, մեկը միջազգային փորձագետն է անում, մյուսը` հանրապետության ներսում աշխատող գիտնականը: Այստեղ կա, եթե կարելի է այսպես ասել, օբյեկտիվ սուբյեկտիվություն փորձագետների կողմից: Փորձագետները ճանաչված գիտնականներ են, արդյունավետ աշխատող իրենց ոլորտում, բայց նրանց մոտեցումները` տարբեր դրույթների հետ կապված, տարբեր են, և մենք դեռևս չենք կարողանում փորձագետների գնահատման այդ տարբերությունները նվազագույնի բերել: Լինում են դեպքեր, երբ փորձագետների գնահատականների տարբերությունները բավական մեծ են լինում: Իհարկե, շատ մեծի դեպքում երրորդ փորձագետին էլ է ուղարկվում, բայց, այնուամենայնիվ, կարծում եմ, որ հետագայում այն չափանիշները, որոնցով նրանք գնահատում են, հետագա հստակեցման և հղկման անհրաժեշտություն ունեն»:

Ըստ գիտության պետական կոմիտեի նախագահի, գիտական փորձաքննության համակարգը կատարյալ դառնում է տարիների ընթացքում, Ռուսաստանում այս համակարգը սկսել են օգտագործել 1994 թվականից, բայց մինչև հիմա ռուսների մոտ կան հիմնախնդիրներ:

«Փորձագետների բանկն ամեն տարի հստակեցվում է, մենք ամեն տարի 50-55 փորձագետների ազգանուններ դուրս ենք հանում ցանկից, որոնք իրենց փորձաքննության ընթացքում, մեղմ ասած, իրենց այնքան էլ լավ չեն պահում», - ասաց Ս. Հարությունյանը:

Նրա կարծիքով, 2-3 գտումից հետո ներկայիս 1500 հոգանոց փորձագիտական բազայից կրնտրվեն 500-600 փորձագետներ, որոնք առավել լավ և որակով են աշխատում, դրա շնորհիվ առկա խնդիրները գոնե մասամբ կլուծվեն:

«Մենք փորձագիտական բազայի որակական կողմերը դեռ պետք է քննարկման առարկա դարձնենք, որովհետև կան նաև այնպիսի մարդիկ, որոնք, իմիջիայլոց, ինչ-որ փորձաքննություն են անում, նրանցից պետք է ձերբազատվել,- ասաց հայագիտություն և հումանիտար գիտությունների ոլորտում մրցութային հանձնաժողովի նախագահ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների թեկնածու Պավել Ավետիսյանը:- Կարևոր չէ` այդ փորձագետները դրսում են աշխատում, թե ներսում, կարևոր է, որ ներկայացված պահանջներին համապատասխան և պատասխանատվության զգացումով աշխատանք տանեն: Շատ լավ փորձագետներ կային, բայց դեպքեր են եղել, մենք էլ բախվել ենք այդ իրողությանը, որ որոշ մարդիկ մատների արանքով են նայել այդ ամենին որպես փորձագետ, այդ մարդկանցից պետք է ձերբազատվել»:

Հեղինակ` Արթուր Հովհաննիսյան